

**Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն**

«Բարձրավուլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտի անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀՀՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Մենք նաև կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀՀՄՄԽ կանոնագրքի համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՄԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Ընկերությունը պետք է բավարարի ֆինանսական հաշվետվության Ծանոթագրություն 18-ում ներկայացված միջազգային կազմակերպությունների հետ կնքված վարկային պայմանագրերի համաձայն վերջիններիս կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի համար ստացված գումարների նպատակային օգտագործման ապահովման պահանջները, ինչպես նաև այդ վարկային պայմանագրերի պայմանները:


Մեր կարծիքով, Ընկերությունը բավարարել է վերոնշյալ պայմանները 2025թ. հունվարի 1-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանում:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նարինե Աճեմյան, FCCA

Առաջադրանքի պատասխանատու



1 հունիսի 2026թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	5	16,788,003	14,126,002
Վաճառքի ինքնարժեք	6	(8,748,049)	(8,657,958)
Համախառն շահույթ		8,039,954	5,468,044
Այլ եկամուտ		175,795	159,843
Վարչական և ընդհանուր ծախսեր	7	(1,434,885)	(1,305,483)
Այլ ծախսեր		(29,982)	(72,294)
Գործառնական գործունեությունից շահույթ		6,750,882	4,250,110
Ֆինանսական եկամուտ	8	1,365,990	1,879,640
Ֆինանսական ծախսեր	8	(2,122,645)	(2,376,530)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	9	(2,198,401)	3,925,054
Շահույթ մինչև հարկերը		3,795,826	7,678,274
Շահութահարկի գծով ծախս	10	(1,075,660)	(586,782)
Տարվա շահույթ		2,720,166	7,091,492
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		2,720,166	7,091,492

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	116,773,347	115,850,556
Ոչ նյութական ակտիվներ		28,615	49,529
Ոչ ընթացիկ կանխավճարներ	12	9,555,957	2,355,396
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		126,357,919	118,255,481
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	13	1,764,275	1,675,049
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	2,355,048	1,923,272
Ժամկետային ավանդներ	15	8,948,300	4,575,536
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	6,058,319	7,810,560
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		19,125,942	15,984,417
Ընդամենը ակտիվներ		145,483,861	134,239,898

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)


Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուսպներ	17		
Բաժնետիրական կապիտալ		21,799,049	21,799,049
Էմիսիոն վնաս		(707,843)	(707,843)
Պահուստային կապիտալ		2,694,607	2,340,032
Կուտակված շահույթ		28,104,236	26,074,227
Ընդամենը սեփական կապիտալ		51,890,049	49,505,465
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	18	80,136,995	73,132,727
Ակտիվների վերաբերող շնորհներ	19	902,038	766,305
Հետաձգված հարկային պարտավորություններ	20	2,832,994	1,987,383
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		83,872,027	75,886,415
Ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկերի և փոխառությունների ընթացիկ մաս	18	6,784,683	5,500,476
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21	2,707,053	3,347,542
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		230,049	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		9,721,785	8,848,018
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		145,483,861	134,239,898

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. հունիսի 1-ին.

Հայկ Հայրուկյան
Գլխավոր տնօրենի պարտականությունները
ցետարող




Իրինա Կարապետյան
Հաշվապահական հաշվառման բաժնի պետ



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն վնաս	Պահուս- տային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	7,909,294	(707,843)	2,213,518	19,960,843	29,375,812
Տարվա շահույթ	-	-	-	7,091,492	7,091,492
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	7,091,492	7,091,492
Բաժնետիրական կապիտալի համալրում	16,343,225	-	-	-	16,343,225
Բաժնետոմսերի հետգնում	(2,453,470)	-	-	-	(2,453,470)
Շահաբաժիններ	-	-	-	(270,965)	(270,965)
Այլ պարտավորություններ բաժնետիրոջը	-	-	-	(580,629)	(580,629)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	13,889,755	-	-	(851,594)	13,038,161
Փոխանցում պահուստային կապիտալ	-	-	126,514	(126,514)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,799,049	(707,843)	2,340,032	26,074,227	49,505,465
Տարվա շահույթ	-	-	-	2,720,166	2,720,166
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	2,720,166	2,720,166
Շահաբաժիններ	-	-	-	(335,582)	(335,582)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	(335,582)	(335,582)
Փոխանցում պահուստային կապիտալ	-	-	354,575	(354,575)	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,799,049	(707,843)	2,694,607	28,104,236	51,890,049

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Տարվա շահույթ	2,720,166	7,091,492
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	3,362,607	3,221,365
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ) վնաս	3,074	(53,476)
Ֆինանսական ծախսեր	2,122,645	2,376,530
Ֆինանսական եկամուտ	(1,365,990)	(1,879,640)
Շնորհներից եկամուտ	(702)	(702)
Շահութահարկի գծով ծախս	1,075,660	586,782
Փոխարժեքային տարբերությունից զուտ (օգուտ) վնաս	2,198,401	(3,925,054)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	10,115,861	7,417,297
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(433,861)	(71,544)
Պաշարների փոփոխություն	(89,226)	62,565
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(2,098,565)	825,750
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	7,494,209	8,234,068
Վճարված շահութահարկ	-	-
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	7,494,209	8,234,068

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2025թ.	2024թ.
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերումների համար վճարներ	(10,162,699)	(5,914,144)
Ժամկետային ավանդների (ներդրում) մարում	(4,570,231)	721,197
Ստացված տոկոսային եկամուտ	1,509,534	1,706,167
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(13,223,396)	(3,486,780)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր		
Շնորհներից մուտքեր	136,435	64,588
Բաժնետիրական կապիտալի մարումներ	-	(2,453,470)
Վճարված շահաբաժիններ	(335,582)	(335,013)
Բաժնետիրոջ այլ պարտավորության մարում	-	(580,629)
Վարկերից և փոխառություններից մուտքեր	12,527,345	3,617,603
Վարկերի և փոխառությունների մարումներ	(4,474,200)	(2,380,093)
Վճարված տոկոսներ	(3,840,680)	(4,298,760)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	4,013,318	(6,365,774)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	(1,715,869)	(1,618,486)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(36,372)	(31,077)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	7,810,560	9,460,123
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	6,058,319	7,810,560

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 46-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար
հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) գործունեության հիմնական ուղղություններն են՝ էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդում, բարձրավոլտ էներգետիկ օբյեկտների և էլեկտրահաղորդման գծերի կառուցում, հաղորդման ցանցի սպասարկում և շահագործում, հաղորդման ցանցի ընդլայնում և զարգացում և հողմաէլեկտրակայանի միջոցով էլեկտրաէներգիայի արտադրություն:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 1998թ. հուլիսի 27-ի թիվ 450 որոշման հիման վրա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկությունը «Հայէներգո» պետական փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման ճանապարհով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը: Ընկերությունը որպես փակ բաժնետիրական ընկերություն է գրանցվել 1998թ. օգոստոսի 21-ին:

Ընկերությունը գործում է 1999թ. հունիսի 18-ին Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից թողարկված «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի հաղորդման մասին» թիվ 0006 լիցենզիայի համաձայն:

Ընկերությունն, իր հաշվեկշռում գտնվող 220/110 կՎ էլեկտրական ցանցով, << ներքին տարածքում էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդման ծառայություններ է մատուցում բաշխիչ ցանցին, սպասարկում և շահագործում է հաղորդման ցանցը, հաղորդման ցանցով իրականացնում է էլեկտրական էներգիայի հաղորդում և տարանցում երրորդ երկրներ, կատարում է էներգետիկ օբյեկտների նախագծային աշխատանքներ, կառուցում է բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր, << կառավարության և պետական ներդրումային ծրագրերի շրջանակներում միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող փոխառու, դրամաշնորհային, ինչպես նաև սեփական միջոցների հաշվին զբաղվում է << տարածքում էներգետիկ օբյեկտների կառուցմամբ և վերակառուցմամբ:

Ընկերության գործունեությունը՝ այդ թվում սակագների քաղաքականությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

Ընկերության միակ բաժնետերն է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, ի դեմս << Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության:

Ընկերությունն ունի 5 տեղամաս.

- Արևմտյան տեղամաս,
- Գորիսի տեղամաս,
- Զանգեզուրի տեղամաս,
- Հարավային տեղամաս
- Հյուսիսարևելյան տեղամաս:

Ընկերությունն ունի նաև << Լոռու մարզում տեղակայված 2.64 մվտ հզորությամբ ցանցային հողմաէլեկտրակայան:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. կազմել է 614 մարդ (2024թ.՝ 514 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Զորավար Անդրանիկի 1:

Համապատասխանություն և անընդհատություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԽ) կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության նշանակություն Հայաստանի Հանրապետության էներգետիկ համակարգի համար:

Գործարար միջավայր

2025թ. Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է գտնվել աշխարհաքաղաքական լարվածության, տարածաշրջանային անվտանգության ռիսկերի և գլոբալ տնտեսության փոփոխվող պայմանների ազդեցության տակ:

Ընթացիկ տարում տնտեսական ցուցանիշները տարբեր ոլորտներում անհավասար են եղել: Շարունակական աճը հիմնականում ապահովվել է առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում՝ արտացոլելով մասնավոր սպառման և ներդրումային ակտիվության կայունությունը: Թեպետ նախկինում որոշակի ենթաճյուղերի կրճատումից կրած ազդեցության՝ արդյունաբերական արտադրությունը վերջին հաշվետու ժամանակաշրջանում ցուցաբերել է կայունություն և չափավոր բարելավում՝ նպաստելով արտադրական որոշակի գործունեության վերականգնմանը:

Ֆինանսական ոլորտը կայուն է մնացել՝ բանկային համակարգի բավարար կապիտալացվածությամբ և բանկային համակարգի պատշաճ վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի առկայությանը՝ կարգավորող վերահսկողությունը և վերահսկողական պրակտիկան շարունակաբար ապահովել են ֆինանսական հաստատությունների իրացվելիությունը, վճարունակությունը և գործառնական կայունությունը:

Ղեկավարությունը գնահատել է տնտեսական ընթացիկ միջավայրի ազդեցությունը Ընկերության գործունեության վրա և արտացոլել է դա սույն ֆինանսական հաշվետվություններում: Սակայն տնտեսական և քաղաքական հետագա իրավիճակը կարող է տարբերվել ներկայիս ակնկալիքներից, և նման տարբերությունները կարող են ազդել Ընկերության ֆինանսական վիճակի, արդյունքի և դրամական հոսքերի վրա:

3 Նոր կամ վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՖՀՄՄ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՄ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ստանդարտի փոփոխությունը՝ կապված «Փոխանակելիության բացակայության» հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

• ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում» ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտը: Չնայած ՖՀՄՍ 18-ը ներառում է ՀՀՄՍ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը
- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
- ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ
- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»:

Ի հավելումն, ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Ընկերությունը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 18-ի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար),
- «Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար),
- ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար):

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական հոդվածներ

4.1 Պատրաստման հիմքերը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ՀՀՄՍԽ կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը կարող են ֆինանսական կորուստների և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունների պատճառ հանդիսանալ, որոնք կարող են բխել կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքներից: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ գրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատական գործընթացները՝ կապված վնասի չեզոքացման կամ մեղմացման հետ և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Ընկերությունը զիտակցում է հետագա ջանքերի անհրաժեշտությունը՝ կլիմայական գործոնները Ընկերության ռիսկերի կառավարման գնահատականներում և արձանագրություններում ամբողջությամբ ինտեգրելու գործում:

4.3 Արժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները

վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
ՀՀ դրամ/1 եվրո	449.01	413.89

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

4.4 Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը հիմնականում առաջանում է էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայություններից, ինչպես նաև արտադրված էլեկտրաէներգիայի վաճառքից:

Էլեկտրաէներգիայի հաղորդումից և արտադրված էլեկտրաէներգիայի վաճառքից հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ամսական ակտի հիման վրա, որը պարունակում է փաստացի հաղորդված կամ վաճառված էլեկտրաէներգիայի քանակները՝ համաձայն առկա պայմանագրային դրույթների: Ամսական ակտը պատրաստվում է էլեկտրաէներգիայի սպառման ամսական ամփոփ հաշվետվության հիման վրա (ներառում է ծավալներ):

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Էլեկտրաէներգիայի հաղորդման և վաճառքի դեպքում հաճախորդները միաժամանակ ստանում և սպառում են փոխանցված էլեկտրաէներգիայի օգուտներն այն ժամանակ, երբ այն տրամադրվում է: Ընկերությունը փոխանցում է վերահսկողությունը ժամանակի ընթացքում, և հետևաբար, բավարարում է կատարման պարտականությունը և ճանաչում է հասույթը ժամանակի ընթացքում:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

4.5 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները ներառում են ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են այդ ակտիվի հաշվեկշռային արժեքում: Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և

վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20-30 տարի
Փոխանցող հարմարանքներ	- 20-50 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	- 10-50 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5-20 տարի
Տնտեսական գույք և այլ	- 5-20 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

4.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը ներկայացված է ստորև.

Լիցենզիաներ և արտոնագրեր	- 8 տարի
Համակարգչային ծրագրեր	- 5-10 տարի:

4.7 Մաշվող ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլիներին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

4.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները (որտեղ կիրառելի է), բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով չափվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ փոխարժեքային տարբերությունից զուտ արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 25-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- Ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Ընկերությունն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ չունի:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդել»:

ՖՀՄՍ 9-ին համապատասխան՝ Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների պահուստ՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով: Ակնկալվող պարտքային կորուստները դրամական պակասուրդների ներկա արժեքն են, որն իրենից ներկայացնում է պայմանագրին համապատասխան Ընկերությանը հասանելիք բոլոր պայմանագրային դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող ստացվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը: Դրամական պակասուրդները զեղչվում են ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջների կիրառման մանրամասն վերլուծության համար տե՛ս Ծանոթագրություն 26.2-ը:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները (որտեղ կիրառելի է), եթե Ընկերությունը ֆինանսական պարտավորությունը չի դասակարգել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Հետագայում ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ներկայացված ժամանակաշրջաններում Ընկերությունն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություն չունի:

Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 25-ում:

4.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները, դրամական միջոցները՝ ճանապարհին, ցպահանջ ավանդները, ինչպես նաև այլ կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով:

4.10 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Ընկերության կողմից կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս: Ընկերությունը սկսում է կապիտալացնել փոխառության ծախսումները որպես որակավորվող ակտիվի արժեքի մաս՝ մեկնարկի ամսաթվին, երբ Ընկերությունն առաջին անգամ բավարարում է հետևյալ բոլոր պայմանները. ակտիվի համար կատարում է ծախսեր, կրում է փոխառության ծախսումներ, ձեռնարկում է այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են՝ ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար:

Այնքանով, որքանով Ընկերությունը միջոցները բացառապես փոխառնում է որակավորվող ակտիվ ձեռք բերելու նպատակով, փոխառության ծախսումների գումարը, որը ենթակա է այդ ակտիվի վրա կապիտալացման, Ընկերությունը որոշում է որպես փոխառության փաստացի ծախսումներ, որոնք առաջանում են այդ փոխառությունից տվյալ ժամանակաշրջանում՝ հանած այդ փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումից ստացվող ցանկացած եկամուտ:

Այնքանով, որքանով Ընկերությունը միջոցները փոխառնում է ընդհանուր նպատակներով և օգտագործում է որակավորվող ակտիվի ձեռքբերման նպատակով, Ընկերությունը կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը որոշում է՝ այդ ակտիվի գծով ծախսերի նկատմամբ կիրառելով կապիտալացման դրույքը: Կապիտալացման դրույքը տվյալ ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության չմարված փոխառություններին վերաբերող փոխառության ծախսումների միջին կշռված մեծությունն է,

բացառությամբ այն փոխառությունների, որոնք բացառապես կատարվել են որակավորվող ակտիվի ձեռքբերման նպատակով:

Փոխառության ծախսումների կապիտալացումը կասեցվում է այն ժամանակաշրջանի ընթացքում, որի ժամանակ Ընկերությունը դադարեցնում է որակավորվող ակտիվների վրա կատարվող աշխատանքները: Փոխառության ծախսումների կապիտալացումը դադարեցվում է, երբ էական բոլոր աշխատանքները, որոնք անհրաժեշտ են որակավորվող ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար, ավարտված են:

4.11 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք՝ իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

4.12 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

4.13 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

4.14 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է

ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

4.15 Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժիններ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Էմիսիոն վնասը հետգնված բաժնետոմսերի անվանական արժեքի և փոխանցված հատուցման արժեքի բացասական տարբերությունն է:

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքները առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

4.16 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ամբողջությամբ ենթակա են մարման տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարծաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.17 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀԱՄ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են իրատեսական:

4.17.1 Գնահատման անորոշություն

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ինչպես նաև ղեկավարությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ վերանայում է մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետների և մնացորդային արժեքների գնահատումները՝ հիմնվելով ակտիվների ակնկալվող օգտակարությունից:

Ղեկավարության համոզմամբ մաշվող ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե մաշվող ակտիվների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Փոխառու միջոցների օգտագործման կանխատեսումներ

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 18-ում, Ընկերությունն ունի շինարարական պայմանագրերի ֆինանսավորման համար նպատակային կնքված փոխառության պայմանագրեր: Փոխառության միջոցների օգտագործումն ուղղակի կախված է շինարարության ընթացքից: Հաշվետու ամսաթվի

դրությամբ Ընկերությունը կատարում է կանխատեսումներ շինարարության ընթացքի և փոխառու միջոցների օգտագործման վերաբերյալ, ինչը երբեմն չի համապատասխանում փաստացի արդյունքներին: Արդյունքում, Ընկերությունը ստիպված է լինում յուրաքանչյուր տարի նոր համաձայնագրերով հետաձգել փոխառու միջոցների օգտագործման և հետևաբար դրանց մարելու ժամանակացույցը, ինչն անդրադառնում է փոխառության ամբողջական գրաֆիկի, հետևաբար նաև ֆինանսական ծախսերի և եկամուտների, ինչպես նաև կապիտալացվող փոխառության ծախսումների վրա:

5 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

	2025թ.	2024թ.
Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայություններ Հայաստանի Հանրապետությունում	13,832,012	11,493,992
Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայություններ Իրանի Իսլամական Հանրապետությունում	2,894,408	2,589,462
Արտադրված էլեկտրաէներգիայի վաճառք	61,583	42,548
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	16,788,003	14,126,002

Էլեկտրաէներգիայի հաղորդման սակագները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

2024-2025թթ. ընթացքում էլեկտրաէներգիայի հաղորդման համար գործել են հետևյալ սակագները (առանց ԱԱՀ):

Գործող ժամանակաշրջան	դրամ/կվտժ
01.02.2025 - 31.01.2026	1.9377
01.02.2024 - 31.01.2025	1.6825
01.08.2023 - 31.01.2024	1.3099

6 Վաճառքի ինքնարժեք

	2025թ.	2024թ.
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	3,303,624	3,167,746
Գնված էներգիայի արժեք	3,381,458	3,706,497
Հատուցումներ աշխատակիցներին	1,947,125	1,659,811
Այլ	115,842	123,904
Ընդամենը վաճառքի ինքնարժեք	8,748,049	8,657,958

Գնված էլեկտրաէներգիայի արժեքն իրենից ներկայացնում է էլեկտրաէներգիայի կորստի գումարը, որն Ընկերությունը կրում է՝ հաճախորդի կողմից պատվիրված էլեկտրաէներգիայի անհրաժեշտ ծավալը փոխադրելիս:

7 Վարչական և ընդհանուր ծախսեր

	2025թ.	2024թ.
Հատուցումներ աշխատակիցներին	742,708	933,755
Չփոխհատուցվող հարկեր	52,743	46,893
Մաշվածություն և ամորտիզացիա	58,981	53,621
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	54,184	61,621

	2025թ.	2024թ.
Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր	76,631	29,040
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	18,866	24,494
Սպասարկման և վերանորոգման ծախսեր	415,155	52,312
Այլ	15,617	103,747
Ընդամենը վարչական և ընդհանուր ծախսեր	1,434,885	1,305,483

8 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

	2025թ.	2024թ.
Կարճաժամկետ բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	1,313,246	1,368,599
Վարկերի պայմանների վերափոխումից օգուտ	44,756	493,320
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ	7,988	17,721
Ընդամենը ֆինանսական եկամուտ	1,365,990	1,879,640
Վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոս	4,324,448	4,545,440
Որպես որակավորվող ակտիվի արժեքի մաս կապիտալացվող փոխառության ծախսեր	(2,201,803)	(2,168,910)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	2,122,645	2,376,530
Զուտ ֆինանսական ծախսեր	756,655	496,890

9 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)

	2025թ.	2024թ.
Ֆինանսական ակտիվներ՝ չափվող ամորֆիզացված արժեքով		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	(2,085)	(3,315)
Ժամկետային ավանդներ	(9,167)	(11,638)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(36,372)	(31,077)
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորֆիզացված արժեքով		
Վարկեր և փոխառություններ	(2,099,369)	4,000,781
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(51,408)	(29,697)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	(2,198,401)	3,925,054

10 Շահութահարկի գծով ծախս

	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկ	230,049	-
Հետաձգված հարկ	845,611	586,782
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,075,660	586,782

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	Արդյունավետ հարկային		Արդյունավետ հարկային	
	2025թ. դրույքաչափ (%)	2024թ. դրույքաչափ (%)	2024թ. դրույքաչափ (%)	2024թ. դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների)	3,795,826		7,678,274	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	683,249	18.00	1,382,089	18.00
(Զհարկվող եկամուտ) չնվազեցվող ծախսեր, զուտ	893,379	24.00	(512,026)	(7.00)
Կուտակված հարկային վնասի օգտագործում	(500,968)	(13.20)	(283,281)	(3.69)
Շահութահարկի գծով ծախս	1,075,660	28.80	586,782	7.31

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (<<) դրամով)

11 Հիմնական միջոցներ

	Հող	Շենքեր, շինություններ և կառուցվածքներ	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատեսակային գույք և այլն	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք								
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	1,680,790	10,910,449	69,343,752	67,200,918	1,392,022	2,840,584	69,758,728	223,127,243
Ավելացում	2,146	-	-	2,138	-	578	7,119,403	7,124,265
Օտարում	-	(17,566)	(4,239)	(2,845)	-	(919)	(993)	(26,562)
Ներքին շարժ	-	8,259	142,635	14,854	-	55,609	(221,357)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,682,936	10,901,142	69,482,148	67,215,065	1,392,022	2,895,852	76,655,781	230,224,946
Կուտակված մաշվածություն								
Ավելացում	31	-	-	51,876	-	14,184	4,201,467	4,267,558
Օտարում	(1,374)	(18,573)	(11,979)	(788,110)	(32,751)	(21,414)	-	(874,201)
Ներքին շարժ	-	1,246,879	-	8,635,408	-	458,336	(10,340,623)	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,681,593	12,129,448	69,470,169	75,114,239	1,359,271	3,346,958	70,516,625	233,618,303
Կուտակված մաշվածություն								
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	6,594,489	50,556,842	48,329,003	981,732	2,054,370	-	108,516,436
Տարվա հաշվարկ	-	292,012	953,432	1,760,872	88,458	114,874	-	3,209,648
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(17,365)	(4,211)	(2,845)	-	(587)	-	(25,008)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	6,869,136	51,506,063	50,087,030	1,070,190	2,168,657	-	111,701,076

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (<<) դրամով)

	Շենքեր, շինություններ և կառուցվածքներ							Անավարտ շինարարություն	Ընդամենը
	Հող	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գույք և այլն	Արտադրատնտեսական գույք և այլն	Մնացորդներ		
Տարվա հաշվարկ	-	295,915	949,904	1,879,868	84,633	131,373	-	3,341,693	
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(18,573)	(11,979)	(785,801)	(32,194)	(21,317)	-	(869,864)	
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	7,146,478	52,443,988	51,181,097	1,122,629	2,278,713	-	114,172,905	
Կուտրված արժեզրկում									
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	-	8,354	109,639	1,923,779	1,820	16,050	613,926	2,673,568	
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	-	-	-	(254)	-	(254)	
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	8,354	109,639	1,923,779	1,820	15,796	613,926	2,673,314	
Արժեզրկման վերականգնում									
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	(615)	(558)	(90)	-	(1,263)	
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	8,354	109,639	1,923,164	1,262	15,706	613,926	2,672,051	
Հաշվեկշռային արժեք									
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,682,936	4,023,652	17,866,446	15,204,256	320,012	711,399	76,041,855	115,850,556	
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,681,593	4,974,616	16,916,542	22,009,978	235,380	1,052,539	69,902,699	116,773,347	

Անավարտ շինարարությունն իրենից ներկայացնում է միջազգային ֆինանսական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ֆինանսավորվող էներգահամակարգի վերականգման ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև սեփական միջոցներով կատարված շինարարական աշխատանքների արժեքը:

Ավարտված կառուցման նախագծեր

Ընթացիկ տարում Ընկերությունն ավարտին է հասցրել Ագարակ-2, Ջովունի և Արարատ-2 ենթակայանների վերակառուցման աշխատանքները և հանձնել դրանք շահագործման:

Անավարտ շինարարությունը ներառում է 4,275,428 հազար ՀՀ դրամ (31 դեկտեմբեր 2024թ.՝ 4,274,902 հազար ՀՀ դրամ), Շինուհայր ենթակայանի մատվ կապիտալացված ծախսումները: Շինուհայր ենթակայանի վերակառուցման աշխատանքները գրեթե ամբողջությամբ ավարտված են և ենթակայանը դրված է լարման տակ: 2026թ. ընթացքում կիրականացվեն արձանագրված թերությունների վերացման աշխատանքները, որից հետո Ընկերությունը կնախաձեռնի ենթակայանի շահագործման հանձնման և ավարտական ակտի ստացման գործընթացները: Վերակառուցման աշխատանքները իրականացնում է «Կասկադ-էներգո» ՍՊ ընկերությունը և ֆինանսավորվում է Ընկերության սեփական միջոցների հաշվին:

Ընթացիկ կառուցման նախագծեր

Իրան - Հայաստան էլեկտրահաղորդման օդային գծի և «Նորավան» ենթակայան

Անավարտ շինարարության մեջ ներառված են «Իրան-Հայաստան 400 կՎ երրորդ էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի կառուցման» ծրագրի շրջանակներում օդային գծի և «Նորավան» ենթակայանի կառուցման ծախսումները՝ 62,057,244 հազար ՀՀ դրամ (31 դեկտեմբեր 2024թ.՝ 59,367,138 հազար ՀՀ դրամ) գումարով: Օդային գծերի շինարարության աշխատանքների 5-րդ և 6-րդ հատվածները (ԻԻՀ սահմանից մինչև Նորավան ենթակայան), ինչպես նաև «Նորավան» ենթակայանի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2026 թվականին: Ծրագրի մյուս մասի ավարտը նախատեսվում է 2027թ. վերջին: Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Իրանի Արտահանման և Զարգացման Բանկի և Սանիր Ինթերնեյշնլ ՖԶԵ-ի փոխառության միջոցներով:

Ծրագրի ավարտից հետո Հայաստանի և Իրանի միջև էլեկտրաէներգիայի փոխհոսքերի հզորությունը 350 ՄՎտ-ից կհասնի մինչև 1200 ՄՎտ-ի, ինչը կնպաստի Հայաստանի էներգետիկ համակարգի անվտանգության, վստահելիության և կայունության բարձրացմանը, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի ամբողջ ծավալով օգտագործելու Իրան-Հայաստան գազատարի թողունակությունը «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի շրջանակներում:

Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց

Անավարտ շինարարությունը ներառում է Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանների վերակառուցման աշխատանքները՝ 1,855,165 հազար ՀՀ դրամ (31 դեկտեմբեր 2024թ.՝ 1,537,363 հազար ՀՀ դրամ): Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Վերականգնման վարկերի բանկի (KfW) և ՀՀ կառավարության համաֆինանսավորման շրջանակում վարկերի և այլ դրամաշնորհային միջոցների հաշվին:

Ծրագիրը պետք է իրականացվի երեք հաջորդական փուլերով (3x350ՄՎտ)՝ 1050 ՄՎտ վերջնական հզորությամբ: Առաջին փուլը իրականացվում է երեք լոտերով՝

Լոտ 1 – 30 ամիս

400/220 կՎ Դոմաշեն ենթակայանի կառուցում՝ ներառյալ Նորադուգ, Գոշ և Մարաշ բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի մուտքային/ելքային միացություններ:

Լոտ 2 – 42 ամիս՝ էլեկտրահաղորդման գծեր

- մեկ նոր 500կՎ միաշղթա ՕԳ Վրաստանի սահմանից մինչև Այրումի փոխակերպիչ կայանի 500կՎ ԲԲՍ (մոտ 7.01 կմ երկարությամբ),
- մեկ նոր 400կՎ երկշղթա ՕԳ (մեկ մոնտաժված շղթա)՝ Այրումի փոխակերպիչ կայանի 400կՎ ԲԲՍ-ից մինչև Դոմաշեն ենթակայանի 400կՎ ԲԲՍ (մոտ 96.7 կմ երկարությամբ),

- 220կՎ Ալավերդի-Գարդաբանի «մուտքային» միաշղթա ՕԳ-ի միացում նոր Այրում ենթակայանին (Այրում- Ալավերդի 220կՎ ՕԳ),
- 220կՎ «Լոռի» միաշղթա ՕԳ-ի (մոտ 50կմ երկարությամբ) վերակառուցում/փոխարինում և 110կՎ «Թումանյան 1 և 2» երկշղթա ՕԳ-ի (մոտ 3կմ երկարությամբ) փոխարինում:

Լոս 3 – 42 ամիս

ԲԼՀՀ փոխակերպիչ կայանի կառուցում Այրումում, որը պետք է լինի 350ՄՎտ հզորությամբ BtB ԼԱՓ (Լարման աղբյուրի փոխակերպիչ) տեխնոլոգիայով փոխակերպիչ կայան

Ծրագրի շրջանակներում բոլոր երեք լոտերով հայտարարված մրցույթներից կայացել է միայն Լոտ-2-ի մրցույթը (օդային գծերի կառուցում), հաղթող ճանաչված ընկերության հետ ընթանում են պայմանագրային բանակցություններ: Լոտ-1 և Լոտ-3 մրցույթները վերահայտարարվել են:

2026թ. մարտի 19-ին, ՀՀ Կառավարությունը և Վերականգնման վարկերի բանկը (ՎՎԲ) ստորագրեցին 135 մլն եվրո ընդհանուր արժողությամբ վարկային և դրամաշնորհային համաձայնագրերը՝ ուղղված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի ֆինանսավորմանը: Վարկային համաձայնագրով ՎՎԲ-ի կողմից տրամադրվելու է 120 մլն եվրո արժողությամբ վարկ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) կառավարության կողմից դիսկերի ապահովագրությամբ, իսկ ԵՄ Հարևանության ներդրումային հարթակի միջոցով տրամադրվելու է 15 մլն եվրո արժողությամբ դրամաշնորհ: Այս նոր հանձնառությունները փոխլրացնում են ԳԴՀ կառավարության և Եվրոպական Հանձնաժողովի կողմից նախկինում տրամադրված դրամաշնորհային և վարկային միջոցները՝ ընդհանուր աջակցությունը հասցնելով 323.75 մլն եվրոյի:

Չարենցավան-3 ենթակայան

Անավարտ շինարարության մեջ ներառված է նաև Չարենցավան-3 ենթակայանի վերակառուցման ծախսումները՝ 1,513,486 հազար ՀՀ դրամ (31 դեկտեմբեր 2024թ.՝ 1,513,486 հազար ՀՀ դրամ): Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶԲ) և ՀՀ կառավարության փոխառության միջոցների հաշվին: «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման աշխատանքների ավարտ էր սահմանված 2023թ. մարտի 16-ը, սակայն կապալառու՝ Efavec Engenharía e Sistemas S.A ընկերության կողմից բազմիցս խախտվել էին պայմանագրային պարտավորությունները, և ենթակայանի վերակառուցումը ավարտին չի հասցվել: 2023թ. պայմանագիրը կողմերի միջև լուծվել է և կապալառուն վերադարձրել է Ընկերությանը փոխանցված կանխավճարը: Ենթակայանի վերակառուցումը ժամանակավորապես դադարեցված է:

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ հոդվածներին.

	2025թ.	2024թ.
Վաճառքի ինքնարժեք	3,283,701	3,156,265
Վարչական ծախսեր	57,992	53,383
	3,341,693	3,209,648

Հիմնական միջոցների ավելացումները ներառում են 2,201,803 հազար ՀՀ դրամի կապիտալացված փոխառության ծախսումներ (2024թ.՝ 2,168,910 հազար ՀՀ դրամ):

Վարկերը և փոխառությունները ապահովելու նպատակով Ընկերությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 38,038,859 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ (2024թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ՝ 36,822,672 հազար ՀՀ դրամ):

12 Ոչ ընթացիկ կանխավճարներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար կանխավճարներ	8,750,639	1,507,871
Վարկերի գծով կանխավճարներ	805,318	847,525

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
	9,555,957	2,355,396

Ոչ ընթացիկ կանխավճարները ներառում են 7,879,025 հազար ՀՀ դրամ կանխավճար փոխանցված «KEC International Limited» ընկերությանը, որի հետ Ընկերությունը կնքել է պայմանագիր՝ «Լոտ 2. Փոխանցման գծեր Կովկասյան փոխանցման ցանց I-III, Փուլ I + IIա շրջանակներում» աշխատանքների իրականացման համար (տե՛ս Ծանոթագրություն 11): Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 70 մլն եվրո (առանց ԱԱՀ) , որից 17,5 մլն եվրո Ընկերությունը փոխանցել է որպես կանխավճար: Պայմանագրով նախատեսվում է էլեկտրահաղորդման գծերի նախագծում և կառուցում:

13 Պաշարներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Պահեստամասեր	422,340	420,921
Նյութեր	884,543	794,925
Շինանյութ	50,036	54,410
Այլ	407,356	404,793
Ընդամենը պաշարներ	1,764,275	1,675,049

14 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ֆինանսական ակտիվներ		
Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայությունից դեբիտորական պարտքեր	2,127,234	1,714,887
Այլ դեբիտորական պարտքեր	41,535	56,556
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	2,168,769	1,771,443
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Ապրանքների և ծառայությունների գծով կանխավճարներ	122,317	46,442
Կանխավճարված հարկեր	58,093	99,196
Այլ	5,869	6,191
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	186,279	151,829
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,355,048	1,923,272

Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծառայությունների վաճառքից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 1 ամիս (2024թ.՝ 1 ամիս):

Ծանոթագրություն 26.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս Ծանոթագրություն 26.1՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

15 Ժամկետային ավանդներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,948,300 հազար ՀՀ դրամի (2024թ.՝ 4,575,536 հազար ՀՀ դրամ) ժամկետային ավանդներ ներդրվել են տեղական բանկերում՝ տարեկան միջինում 9.6% դրամային տոկոսադրույքով (2024թ.՝ 9.9% դրամային և 2.75% արտարժույթային): Ավանդները ներդրվել են մեկ տարի ժամկետով:

Տե՛ս ծանոթագրություն 26՝ ժամկետային ավանդների արժույթների և պարտքային ռիսկի բացահայտման համար:

16 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Կարճաժամկետ ավանդներ՝ դասակարգված որպես դրամական միջոցների համարժեք	5,843,204	7,802,780
Բանկային հաշիվներ	215,115	7,780
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6,058,319	7,810,560

Տե՛ս Ծանոթագրություն 26՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների արժույթների բացահայտման համար:

17 Սեփական կապիտալ

17.1 Բաժնետիրական կապիտալ

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի: Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և վճարված:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետիրական կապիտալը կազմել է 21,799,049 հազար ՀՀ դրամ, որը բաշխված է յուրաքանչյուրը 38,889.72 ՀՀ դրամ արժեքով 560,535 հատ բաժնետոմսերի միջև:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից:

17.2 Շահաբաժիններ

2025թ. Ընկերությունը հայտարարել է և վճարել է 335,582 հազար ՀՀ դրամի շահաբաժին (2024թ.՝ 270,963 հազար ՀՀ դրամ):

17.3 Էմիսիոն վնաս

Էմիսիոն վնասը ներկայացնում է հետգնված մասնաբաժնի անվանական արժեքի և փոխանցված հատուցման արժեքի բացասական տարբերությունը:

17.4 Պահուստային կապիտալ

Պահուստային կապիտալին կուտակված շահույթից կատարվում են հատկացումներ: Այդ հատկացումները կարգավորվում են Ընկերության կանոնադրությամբ և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, որոնց համաձայն Ընկերությունը պարտավորված է ստեղծել թողարկված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով չբաշխվող պահուստ: Այս պահուստը ստեղծվում է Ընկերության ապագա պոտենցիալ կորուստները ծածկելու նպատակով:

2025թ. հունիսի 27-ին Ընկերության բաժնետիրոջ որոշմամբ պահուստային կապիտալը համարվել է 354,575 հազար ՀՀ դրամով (2024թ.՝ 126,514 հազար ՀՀ դրամով):

18 Վարկեր և փոխառություններ

	Ոչ ընթացիկ		Ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Վարկեր << ֆինանսների նախարարությունից	47,910,968	42,996,399	5,151,393	3,980,899
Այլ վարկեր	32,226,027	30,136,328	1,633,290	1,519,577
Ընդամենը վարկեր և փոխառություններ	80,136,995	73,132,727	6,784,683	5,500,476

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից վարկերը ներառում են.

Ֆինանսավորող կառույց	Պայմանագրի գումար (արժույթ) Արժույթ	Մարման տարի տոկոսադրույք	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		Ֆինանսավորվող ծրագիր
			Սկայներ չկան	ՀՀ դրամ	Սկայներ չկան	ՀՀ դրամ	
Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ (ՎՀՄԲ)	34,065,585	ԱՄՆ դոլար	2036	7.50%	9,164,215	10,446,915	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիություն
Ֆինանսների նախարարությունից Հանաֆինանսավորում - (ՎՀՄԲ)	Տվյալներ չկան	ՀՀ դրամ	2036	7.50%	2,581,137	2,829,632	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիություն
Ֆինանսների նախարարությունից Հանաֆինանսավորում - (ՎՀՄԲ)	24,556,940	ԱՄՆ դոլար	2039	7.43%	8,610,252	10,024,925	Լրացուցիչ ֆինանսավորում- Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիություն
Ֆինանսների նախարարությունից Հանաֆինանսավորում - (ՎՀՄԲ)	Տվյալներ չկան	ՀՀ դրամ	2039	7.43%	1,196,712	1,289,045	Լրացուցիչ ֆինանսավորում- Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիություն
Ֆինանսների նախարարությունից Հանաֆինանսավորում - (ՎՀՄԲ)	23,194,486	ԱՄՆ դոլար	2039	6.83%	6,620,403	6,681,976	Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում
Ֆինանսների նախարարությունից Հանաֆինանսավորում - (ՎՀՄԲ)	Տվյալներ չկան	ՀՀ դրամ	2039	3.82%	1,945,880	1,896,429	Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում
Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկ - (ՎՀՄԲ)	40,000,000	ԱՄՆ դոլար	2049	7.30%	1,256,964	-	Էներգետիկ անցումն ապահովող ծրագիր
Ասիական զարգացման բանկ - (ԱՀԲ)	8,262,786	ՀՓԻ	2039	3.12%	2,932,183	3,117,444	Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերականգնում
Ֆինանսների նախարարությունից Հանաֆինանսավորում - (ԱՀԲ)	Տվյալներ չկան	ՀՀ դրամ	2039	3.14%	803,170	869,665	Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերականգնում
Գերմանիայի Ջարգացման Վարկերի Բանկ	10,200,000	Եվրո	2054	0.75%	706,645	519,254	Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I
Ֆինանսների նախարարությունից Հանաֆինանսավորում -Գերմանիայի Ջարգացման Վարկերի Բանկ	Տվյալներ չկան	ՀՀ դրամ	2054	0.75%	287,607	257,053	Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (<<) դրամով)

Ֆինանսավորող կառույց	Պայմանագրի գումար (արժույթ)	Արժույթ	Մարման տարի տոկոսադրույթ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
				Սպորտային հիմնադրամ	Ֆինանսավորվող ծրագիր	Սպորտային հիմնադրամ	Ֆինանսավորվող ծրագիր
Գերմանիայի Հարգացման Վարկերի Բանկ	83,000,000	Եվրո	2030	2.43%	7,036,889	-	Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց III
Համաշխարհային Բանկ	19,600,000	ԱՄՆ դոլար	2033	0.50%	2,421,292	2,832,531	Էլեկտրահաղորդում և բաշխիչ համակարգեր
Գերմանիայի Հարգացման Վարկերի Բանկ	7,300,000	Եվրո	2049	0.75%	2,529,742	2,430,379	Գյումրի II ենթակայանի վերականգնում
Գերմանիայի Հարգացման Վարկերի Բանկ	14,060,000	Եվրո	2038	0.75%	2,840,711	2,819,828	Հոսանքահաղորդիչ համակարգի վերականգնում
Ֆինանսների նախարարություն	2,070,000,000	<< դրամ	2029	9.96%	2,128,559	962,222	-
Ընդամենը վարկեր << ֆինանսների նախարարությունից					53,062,361	46,977,298	
Այլ վարկերը ներառում են.							
Ֆինանսավորող կառույց	Պայմանագրի գումար (արժույթ)	Արժույթ	Մարման տարի տոկոսադրույթ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ֆինանսավորվող ծրագիր	
Իրանի Արտահանման և Հարգացման Բանկ	86,447,915	Եվրո	2029	5.67%	31,629,449	27,863,060	Իրան-Հայաստան 400կվ երրորդ էլեկտրահաղորդման գիծ և համապատասխան ենթակայանի շինարարություն
Սանիր Ինժեռնեջնկ ՖՀԷ	20,399,324	Եվրո	2026	5.50%	2,229,868	3,792,845	Իրան-Հայաստան 400կվ երրորդ էլեկտրահաղորդման գիծ և համապատասխան ենթակայանի շինարարություն
Ընդամենը այլ վարկեր					33,859,317	31,655,905	
Ընդամենը վարկեր և փոխառություններ					86,921,678	78,633,203	

Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունում ֆինանսավորման գործունեությունից առաջացող վարկերի և փոխառությունների փոփոխությունները համադրվում են հետևյալ կերպ.

	Վարկեր և փոխառություններ	
	2025թ.	2024թ.
հունվարի 1-ի դրությամբ	78,633,203	83,794,896
Դրամային հոսքերից		
Ստացված գումար	12,527,345	3,617,603
Մարումներ	(4,474,200)	(2,380,133)
Վճարված տոկոսներ	(3,840,680)	(4,298,760)
Ընդամենը փոփոխություն ֆինանսավորման դրամային հոսքերից	82,845,668	80,733,606
Ոչ դրամային հոսքերից		
Պարտքի հաշվանցում	(2,303,048)	(2,151,742)
Պարտքի պայմանների փոփոխությունից օգուտ	(44,756)	(493,320)
Տոկոսի հաշվեգրում	4,324,448	4,545,440
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	2,099,366	(4,000,781)
Ընդամենը ոչ դրամային փոփոխություն	4,076,010	(2,100,403)
դեկտեմբերի 31-ի դրությամբ	86,921,678	78,633,203

Վարկային պայմանագրերով սահմանված պայմաններ

Ասիական Զարգացման Բանկի վարկային համաձայնագրում ամրագրված վարկային կովենանտներ

Համաձայն Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2014թ. սեպտեմբերի 5-ին կնքված «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում» ծրագրի N 3150-ARM վարկային համաձայնագրի «Ժամանակացույց 5»-ի ֆինանսական ցուցիչների 4-րդ հոդվածում ամրագրված ֆինանսական ցուցանիշների թույլատրելի սահմանների ապահովման պայմանի Ընկերությունը պետք է ապահովի հետևյալ գործակիցները՝

- պարտքի սպասարկման ծառայության գործակից՝ ոչ պակաս, քան 1.1,
- ինքնաֆինանսավորման գործակից՝ ոչ պակաս, քան 20%

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հաշվարկված գործակիցները հետևյալն են.

- պարտքային ծառայության ծածկման գործակից՝ 0.90,
- ինքնաֆինանսավորման գործակից՝ 89%:

Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի վարկային պայմանագրերում ամրագրված վարկային կովենանտներ

Համաձայն Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև վարկային համաձայնագրերի, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև ստորագրված ենթավարկային համաձայնագրերի դրույթների, Ընկերությունը չի կարող կուտակել նոր պարտքեր, քանի դեռ Ընկերության եկամուտների և ծախսերի հիմնավորված կանխատեսումները ցույց չեն տա, որ յուրաքանչյուր տարվա համար Ընկերության կողմից կանխատեսված զուտ եկամուտները

առնվազն 1.2 անգամ գերազանցում են այդ տարվա ընթացքում բոլոր պարտքերի (ներառյալ նոր պարտքերը) սպասարկման համար անհրաժեշտ միջոցներին:

19 Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	766,305	702,419
Տարվա ընթացքում ստացված	136,435	64,588
Ճանաչված շահույթում կամ վնասում	(702)	(702)
Տարեվերջի մնացորդ	902,038	766,305

Ակտիվներին վերաբերող շնորհների մնացորդը ներառում է հետևյալ գործընկերների կողմից տրամադրված գումարները.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հարևանության ներդրումային ծրագիր (ՀՆԾ)	482,320	343,504
Գերմանիայի Զարգացման Վարկերի Բանկ	310,250	355,171
ՀՀ Ֆինանսների նախարարություն	107,129	64,588
Այլ	2,339	3,042
	902,038	766,305

Ընկերությունը միջազգային ֆինանսական կազմակերպություններից շնորհներ է ստացել՝ էներգահամակարգի վերականգնման և բարելավման ծրագրերի իրականացման շրջանակներում: Դրամաշնորհներն օգտագործվելու են Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների վերակառուցման ծրագրի շրջանակներում, բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի, ինչպես նաև Այրում 500/400/220կՎ ենթակայանի կառուցում, էլեկտրահաղորդման գծերի շինարարությունը և միացումը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

20 Հետաձգված հարկային պարտավորություններ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	1,987,383	1,400,601
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս	845,611	586,782
Տարեվերջի մնացորդ	2,832,994	1,987,383

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	28,313	(3,323)	24,990
Փոխանցվող հարկային վնաս	500,968	(500,968)	-
Պաշարներ	60,380	(472)	59,908
	589,661	(504,763)	84,898

	1 հունվարի 2025թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2025թ.
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	2,252,212	418,022	2,670,234
Վարկեր և փոխառություններ	324,832	(129,717)	195,115
Ոչ ընթացիկ կանխավճարներ	-	52,543	52,543
	2,577,044	340,848	2,917,892
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	1,987,383	845,611	2,832,994

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	27,833	480	28,313
Փոխանցվող հարկային վնաս	784,249	(283,281)	500,968
Պաշարներ	49,073	11,307	60,380
	861,155	(271,494)	589,661
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	1,898,510	353,702	2,252,212
Վարկեր և փոխառություններ	363,246	(38,414)	324,832
	2,261,756	315,288	2,577,044
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	1,400,601	586,782	1,987,383

21 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով կրեդիտորական պարտքեր	577,040	1,401,175
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,513,282	1,423,243
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	170,724	167,157
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	438,670	354,638
Ստացված կանխավճարներ	7,337	1,329
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,707,053	3,347,542

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի արժույթների բացահայտումը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում:

22 Կապակցված կողմեր

Հայաստանի Հանրապետության կառավարությանը պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%, հետևաբար բոլոր պետական ձեռնարկությունները համարվում են Ընկերությանը կապակցված: Ընկերության կապակցված կողմերը ներառում են նաև հիմնական ղեկավար անձնակազմը:

22.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության:

22.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2025թ.	2024թ.
Բաժնետերեր		
Ստացված վարկեր	11,330,205	2,632,193
Տոկոսային ծախսի հաշվեգրում	2,113,320	2,755,116
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	111,549	114,130

Մնացորդներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Բաժնետերեր		
Վարկեր և փոխառություններ	53,062,361	46,977,298
Ոչ ընթացիկ կանխավճարներ	805,318	847,525
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձի գծով պարտավորություններ	10,268	17,306

23 Պարտավորվածություններ

23.1 Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը ունի կնքված պայմանագրեր կապիտալ ներդրումների գծով՝ 33,917,170 հազար ՀՀ դրամի հիմնական միջոցները ձեռք բերելու նպատակով (2024թ.՝ 12,491,932 հազար ՀՀ դրամ):

24 Պայմանականություններ

24.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված

պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

24.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

25 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.8-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,168,769	1,771,443
Ժամկետային ավանդներ	8,948,300	4,575,536
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6,058,319	7,810,560
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	17,175,388	14,157,539

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	86,921,678	78,633,203
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,261,046	2,991,575
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	89,182,724	81,624,778

Ընկերության ֆինանսական գործիքների ռիսկերի նկարագրությունը՝ ներառյալ ռիսկի կառավարման նպատակները և քաղաքականությունը, արտացոլված են Ծանոթագրություն 26-ում:

26 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունը և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

26.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային և տոկոսադրույքային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության վարկերից, որոնք հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև.

Հոդված

31 դեկտեմբերի 2025թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	ՀՓԻ
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	79,703	26,449	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	214,927	188	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	294,630	26,637	-
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	27,465,579	46,439,333	2,916,862
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,333,043	1,718,495	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	28,798,622	48,157,828	2,916,862
Զուտ արդյունք	(28,503,992)	(48,131,191)	(2,916,862)

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	ՀՓԻ
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	83,116	24,243	-
Ժամկետային ավանդներ	615,713	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,607	173	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	706,436	24,416	-
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	29,986,347	37,425,366	3,117,444
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,333,043	1,718,495	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	31,319,390	39,143,861	3,117,444
Զուտ արդյունք	(30,612,954)	(39,119,445)	(3,117,444)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՀՓԻ-ի նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՀՓԻ-ի նկատմամբ 10%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2025թ.	2024թ.
ԱՄՆ դոլար	2,850,399	3,061,295
Եվրո	4,813,119	3,911,945
ՀՓԻ	291,686	311,744

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված վարկերի մնացորդներից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Տոկոսադրույքային ռիսկի վերլուծություն

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն և լողացող տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն և լողացող տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

Վարկերի և փոխառությունների արդյունավետ տոկոսադրույքները ներկայացված են Ծանոթագրություն 18-ում:

Ստորև ներկայացված զգայունության վերլուծությունն իրականացվել է տոկոսադրույքի 0.5%-ի (2024: 0.5%) փոփոխության համար: 0.5% ղեկավարության կողմից գնահատված տոկոսադրույքի հավանական փոփոխությունն է:

Եթե տոկոսադրույքը լիներ 0.5% բարձր/ցածր (2024թ.՝ 0.5% բարձր/ցածր), իսկ մյուս փոփոխականները մնային հաստատուն, ապա Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթը կնվազեր/կաճեր 298,756 հազար ՀՀ դրամով (2024թ.՝ կնվազեր/կաճեր 352,079 հազար ՀՀ դրամով):

26.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Ընկերության ղեկավարությունը զգուշորեն կառավարում է պարտքային ռիսկը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից: Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը ներառում է մոդելների օգտագործում, քանի որ ռիսկը տատանվում է՝ կախված շուկայական պայմաններից, դրամական միջոցների ակնկալվող հոսքերից և ժամանակի ընթացքից:

Ակնկալվող պարտքային կորուստների մոտեցումն օգտագործում է երեք փուլ՝ արժեզրկումից կորուստների բաշխման համար:

Փուլ 1. Ակնկալվող պարտքային կորուստներ հաջորդ տասներկու ամսվա ընթացքում

Փուլ 1-ը ներառում է բոլոր այն պայմանագրերը, որոնց սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճ չկա, և սովորաբար պարունակում է նոր պայմանագրեր, որոնք ժամկետանց են 31 օրից պակաս: Ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որը վերաբերում է պարտազանցման դեպքերին, որոնք հնարավոր են առաջիկա 12 ամիսների ընթացքում:

Փուլ 2. գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ – պարտքային արժեզրկման բացակայություն

Եթե ֆինանսական ակտիվը սկզբնական ճանաչումից ի վեր ունի պարտքային ռիսկի զգալի աճ, սակայն դեռևս պարտքային արժեզրկում չի եղել, այն տեղափոխվում է փուլ 2 և չափվում գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորստի ժամանակ: Սա սահմանվում է որպես ակնկալվող պարտքային կորուստ, որը բխում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ընթացքում բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամեն դեպքում, Ընկերությունը գտնում է, որ տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ, երբ պայմանագրային վճարումը ժամկետանց է ավելի քան 31 օր:

Փուլ 3. գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ – պարտքային արժեզրկման առկայություն

Եթե ֆինանսական ակտիվը սահմանվում է որպես պարտքային առումով արժեզրկված կամ պարտազանցման վիճակում գտնվող, այն տեղափոխվում է փուլ 3 և չափվում է գործողության ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորստի ժամանակ: Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվի օբյեկտիվ ապացույցները ներառում են 90 ժամկետանց օր, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք ցույց են տալիս պայմանագրային գործընկերոջ նշանակալի ֆինանսական դժվարությունները: Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է պարտազանցման վիճակում, երբ հավանական չէ, որ պայմանագրային գործընկերն ամբողջությամբ կվճարի Ընկերության նկատմամբ իր վարկային պարտավորությունները՝ առանց Ընկերության կողմից այնպիսի գործողությունների դիմելու, ինչպիսին է երաշխիքի իրացումը (եթե այդպիսիք կան):

Այն հանգամանքի որոշելը, թե արդյոք ֆինանսական ակտիվը կրել է պարտքային ռիսկի նշանակալի աճ, թե ոչ, հիմնված է պարտազանցման հավանականության գնահատման վրա, որը կատարվում է առնվազն ամսական մեկ անգամ՝ ներառելով արտաքին վարկանիշային տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկությունը, ինչպես նաև ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի վերաբերյալ ներքին տեղեկությունը: Ֆինանսական կազմակերպություններից դեբիտորական պարտքեր չհանդիսացող ֆինանսական ակտիվների համար պարտքային ռիսկի զգալի աճը գնահատվում է հիմնականում ժամկետանց տեղեկությունների հիման վրա:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,168,769	1,771,443
Ժամկետային ավանդներ	8,948,300	4,575,536
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6,058,319	7,810,560
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	17,175,388	14,157,539

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ժամկետային ավանդների և դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստներ 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն ճանաչվել, քանի որ դրանց գումարն աննշան է:

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով հաշվետու ամսաթվին նախորդող 2 տարվա ընթացքում վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոնների ազդեցությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Հաշիվ-ապրանքագրի ամսաթվից հետո 180 օրվա ընթացքում վճարում չկատարելը և Ընկերության հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

26.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական հոսքերը:

2025թ.	Անտոկոս	Գործիքներ փոփոխուն տոկոսա- դրույքով	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		6.40%	4.55%	
Մինչև 6 ամիս	2,111,414	1,784,638	2,295,048	6,191,100
6 ամսից մինչև 1 տարի	149,632	1,967,183	8,125,466	10,242,281
1-5 տարի	-	19,949,189	42,796,874	62,746,063
Ավելի քան 5 տարի	-	23,819,988	7,537,477	31,357,465
	2,261,046	47,520,998	60,754,865	110,536,909

2024թ.	Անտոկոս	Գործիքներ փոփոխուն տոկոսա- դրույքով	Գործիքներ հաստատուն տոկոսա- դրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք		5.74%	4.60%	
Մինչև 6 ամիս	2,991,575	2,547,924	2,388,711	7,928,210
6 ամսից մինչև 1 տարի	149,515	2,091,712	1,254,328	3,495,555
1-5 տարի	-	15,807,859	37,869,479	53,677,338
Ավելի քան 5 տարի	-	29,450,801	20,195,467	49,646,268
	3,141,090	49,898,296	61,707,985	114,747,371

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները, ժամկետային ավանդները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության ավանդները և առևտրային դեբիտորական պարտքերն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման մեկ ամսվա ընթացքում:

27 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

27.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ընկերության ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Ընկերության տոկոսային վարկերի և փոխառությունների իրական արժեքները որոշվում են զեղչված դրամական հոսքերի մեթոդի կիրառմամբ՝ օգտագործելով զեղչման տոկոսադրույքը, որն արտացոլում է թողարկողի փոխառության տոկոսադրույքը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ

Երկարաժամկետ վարկերի և փոխառությունների իրական արժեքը որոշվել է՝ զեղչելով համապատասխան դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների համար շուկայական տոկոսադրույքը: Այս դեպքում ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

Ընկերության ֆինանսական գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

28 Կապիտալի ռիսկի քաղաքականություն և ընթացակարգեր

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետիրոջը բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկերը, որոնք բացահայտված են Ծանոթագրություն 18-ում:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք: Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Զուտ պարտք		
Վարկեր և փոխառություններ	86,921,678	78,633,203
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(6,058,319)	(7,810,560)
	80,863,359	70,822,643
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	51,890,049	49,505,465
	51,890,049	49,505,465
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	1.56	1.43